ՀԻՆԳՆԱԳԵՏՆԵՐԻ ՀՈՓՈՒԷԳԻ
ԿՈՂՈՍՊ ՔՊ ԻՑ ԿՂՈՒԷՄՈՇԱԺ Ս. ԷՈԽՈՊՈՂ Է�է ՇՏՑԱՆՈՒԷՈՒԷ ՍՈՓՈՒԷԳԻ
ՏՍՈ ԿԺՏՀՍՈ ԿՂՈՄՈՒԷԳԻ ՏՑԷ ԿՂՈՒԷՂՀՍԷՋՀՍՄՈՒԷ Ս. ՊԿ

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետությունում կայացած նախագահական արտահերթ ընտրությունների երկրորդ փուլում մարտի 30-ին, ՀՀ նախագահ ընտրվեց վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:

Ապրիլի 9-ին գումարվեց ՀՀ Ազգային Ժողովի հատուկ նիստ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում, ուր տեղի ունեցավ Ռոբերտ Քոչարյանի՝ ՀՀ նախագահի պարտականություններն ստանձնելու երդման հանդիսավոր արարողությունը:

Պետական օրհներգի հոտնկայս ունկնդրումից հետո, ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը հրապարակեց ընտրությունների արդյունքների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերջնական որոշումը Ռոբերտ Քոչարյանի ընտրության վերաբերյալ:

Այնուհետև դահլիճ բերվեցին ՀՀ պետական դրոշը, ՀՀ Սահմանադրության մայր օրինակը և Մաշտոցյան Մատենադարանից բերված Է դարի «Վեհամոր Ավետարանը»:

Նորընտիր նախագահը, ձեռքը դնելով Ավետարանի և Սահմանադրության վրա, կարդաց երդման տեքստը՝ պարտավորվելով լինել հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը, առաջնորդվելով սահմանադրությամբ և օրենքներով, նվիրումով և հավատարմորեն ծառայել ժողովրդին՝ հանուն հայոց պետականության հզորության և համազգային նպատակների իրագործման:

Ապա նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հայրապետական մաղթանքն ու օրհնությունը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Վերջում նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց ընտրությունների մասնակիցներին և հանդես եկավ ծրագրային դրույթներ պարունակող ելույթով: